

ԱՆԱԾԻՏ

Հ Ա Ն Պ Ե Ս Ա Մ Ս Ե Ա Ց

ԱԶԳԱՅԻՆ , ԳՐԱԿԱՆ , ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

Գ. ՏՄԻԻ

ՄԱՐՏ 1901

ԹԻԻ 3

ՀԱՅՆԵՐԸ ԲԱՐԻՉԻ ՄԷՉ

Այն բոլոր հայ գաղութներէն, որոնք այս գարուս մէջ կազմուած են Եւրոպա եւ Ամերիկա, ամենէն շահեկանը՝ եւ ամենէն հազարապետէն բարիքի հայ գաղութն է ապահովուպէս :

Այդ գաղութը, շատ կարեւոր ու արդիւնաւոր է եղած՝ անվիճելի կերպով : Ճրանասան ըլլալով աշխարհի այն երկիրը որուն հետ հայ ցեղը ամենէն ներքին ու սրտագին կապերն ունի, Ճրանասայի մայրաքաղաքը արտասանմանի այն կեդրոնը եղած է, — Մոսկուայի հետ, — ուր Հայերը ամենէն աւելի իրենց արժանիքը փայլեցուցած եւ ազգային կեանքի արտայայտութիւններ բազմապատկած են : Բարիքի մէջ է որ Շահան Զրպետ հաստատած է հայերէն լեզուի առաջին եւրոպական դաստանգութիւնը ու հիմնած Ֆրանսական հայագիտութիւնը որ, բարիգաբնակ կամ Բարիքի հետ մշտական հաղորդակցութեան մէջ գտնուող Մխիթարեաններու այլակցութեամբ, արտադրած է Սէն-Մարթէնները, իր վճայան որ Ֆլորիսները, Տելլորիէնները, Լանկուտները, Պրոսէնները, Գարիբէրներն ու Մէյնէները : Բարիքի հայ գաղութը ունեցած է երկու հայ վարժարան, Սամուէլ-Մուրադ եւ Հայկազեանը, երկու հայերէն թերթ, «Մասեաց Ազգանին» ու «Արեւելք»ը, եւ Արամեան տպարանը : Բարիքի մէջ

է որ գործած են մեր ամենէն կարեւոր անձնաւորութիւններէն մէկ քանին, Գարրիէլ Այվազովսկի, Խորէն Նարպէյ, Ղեւոնդ Ալիշան, Կարապետ վարդապետ Շահնուշարեան, Նուպար փաշա, Գրիգոր Օտեան : Բարիքի մէջ է որ ուսում առած են Հայոց — մասնաւորապէս Թրքահայոց — այս վերջին կէս դարուն ամենէն նշանաւոր անձերը մեծ մասամբ Այս նորագոյն շրջանին մէջ, Բարիքի Հայերն են — Իսքէնտէր ու Բարիքի Հայոց Հայրենասիրական Ընկերակցութեան միւս անդամները, — որ Անդլոնյ. Հայոց հետ, ամենէն աւելի ջանք թափած են () իր յօրուածին գործադրութիւնը փութացնելու նպատակով : Զարդերու միջոցին, Բարիքի հայ ուսանողութիւնը ու է քաղաքի ուսանողութեան մեծ զործունէութիւն ցոյց տուած է Ճրանասայի մէջ հայասիրական շարժում մը արժարելու համար ու Բարիքի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը՝ 96-98ին՝ հայ փախստականներուն օգնելու համար մեծ եռանդով աշխատած է : Բարիքի հայ ուսանողութիւնը կազմած է իր ակումբը, գրադարանը, գրական հաւաքումները, որոնք մէկ քանի փայլուն շրջաններ ունեցած են : Ու Բարիքի մէջ է որ երեւան եկած են արդի Հայութեան ամենէն գեղեցիկ տաղանդներէն մէկ քանին, — Զաքարեան, Տիգրան Երկաթ, Մանուէլեան, Շահին : Բարիքի հայ գաղութին կէս դարու պատմութիւնը պատուաբեր է ուրեմն իրեն համար, եւ հայ ժողովրդին համար . անոր կրնան բազմաթիւ միայն Մոսկուայի հայ գաղութը, եւ հիմա՝ Ամերիկայի գաղութները (չեմ հաշուեր վենետիկ եւ վիեննայի վանքերը որոնք բովանդակ Հայու-

թեան վերաբերող կեդրոններն են ու գաղութի մը արդիւնքը չեն կրնար նկատուիլ)։

Այս բոլորը սակայն մետալլիս զեղեցիկ երեսը կը կապմեն Մետալլը իր մութ երեսն ալ ունի։ Այդ մութ երեսը, տեւականութեան, ամբողջականութեան պահար, ամառը ու հիմնադր կազմակերպութեան բացակայութիւնը, աշխատանքի ճիգերու միջեւ կապակցութեան չգոյութիւնն է։

Բոլոր այն գործերը զոր յիշատակեցիք, մէկ քանի անձերու անհատական ջանքին արդիւնքը եղած են։ գրեթէ միշտ, անձին հետաքրքրմով, գործը գաղբած է. երբեմն խմբակներ կազմուած են, որոնց ոմանք բաւական տեւականութիւն ցոյց տուած են. բայց որոնց գրեթէ ամենքն ալ բնիցնա ու կզրիացած գոյութիւն մը ունեցած են, անապատի մէջ ցանցասօրէն բուսած ու իրենք իրենցմով տպւորող ուխտիօներու պէս։ Այդ բոլոր գործերուն շուրջը, Բարիզի Հայերուն մեծամասնութիւնը ակտիւր չեն, անգործ, տարացնած քաղաք մը կազմած է, երբեմն կատարած ճիգին հատուածական ու վազանցուկ հետաքրքրութիւն մը ցոյց տալով, յաճախ բացարձակապէս անփոյթ ու անազորդ։ Կարգ մը Հայեր, կամ Հայերու խմբակներ, գործած են Բարիզի մէջ. բայց Բարիզի Հայութիւնը, իրրեւ կազմակերպուած գաղութի, հաւաքական գիտակցութեամբ գործունէութիւն մը չէ ունեցած։

Յորմէնեթ Միխիլաթեանները որոշած են Սամուէլ-Մարտանան վարժարանը Վենետիկ փոխադրել, Բարիզի Հայութիւնը ու եւ ջ ջանք չէ բրած գաղտնի մը պակասը լեցնելու համար։ Լանկուսային ու Տիւրքիէին մասին ի վեր, Բարիզի Հայերը չեն ճգնած անոնց գործը շարունակող ուրիշ ձեռնարկներ յարուցանելու համար հարկաւոր աշխատութիւնը յանձն տանել։ Հայրենասիրական Ընկերակցութիւնը, մտերմական խմբակ մը, շատ գնահատելի գործունէութիւն մը ունեցած է, բայց անկապ Բարիզի Հայերուն ամբողջութեանը հետ, եւ անշարունակական ու համեստ՝ իր ծրարքին մեծութեանը բազմաամար։ Ուսանողական ընկերութիւնը գեղեցիկ շրջան մը ունեցած է

Տր. Ռաֆայէլեանի օրով, յետոյ զբաշխուած՝ անոր մենկուսութիւնը, պարճեալ վերակենդանացած՝ Կ. Պոլսոյ Կեդրոնականին մէկ քանի Բարիզեկան աշակերտներուն ջանքովը, ջարդերուն շրջանին՝ շատ գովելի եռանդի մը սպասոյցները տուած, յետոյ երբեմնակի ու տարածմամբ

գոյութիւն մը ունեցած է, այսօր՝ գրեթէ տարիէ մը ի վեր՝ դարձեալ բացարձակ մետուլութեան մը մէջ ինկած։ Բարիզի գործական ընկերութիւնը, որ Սէն Սի կենդանի եւ գործուն մարմին մը եղած է, ՅՅէն ի վեր անկենդանութեան փութիւն մը մէջ մտած էր, եւ այն պատճառով որ այս ամբողջը կը պրեմ, կը փորձէ վերականգնել երեկոյթի մը սարքերով։

Այս հասարակականութիւնն ու անյարտեւութիւնը պատճառ է եղած որ Բարիզի Հայութիւնը իր ձոցին մէջ արտագրելով հանդերձատ կարեւոր աշխատութիւններ, չէ տուած այն ամբողջ արդիւնքը զոր կրնար եւ պարտէր տալ, բաղդատմամբ այն ատուելալիցեալ ու տիեզերական դիրքին զոր ունէր։ Ամօթալից, ապշեցուցիչ բան մըն է նկատելով որ այս բարձրամտայն գաղութը զեռ շուրհի մտական հաւաքավայր մը, քլլեւպ մը, ուր Բարիզի բոլոր Հայերը կարենան իրարու հանդիպել, իրար ճանչնալ եւ ատով հաւաքաբար գործելու բերում ու միջոց գտնել, եւ չունի ու եւ չեն կերտութիւն մը որուն ամբողջ գաղութը մասնակցել ըլլայ եւ որ ֆրանսական ժողովրդին հանգէպ Բարիզի Հայութեան պայտնական ներկայացուցիչն հանդիսանայ։ Այս էական աստարներուն չգոյութիւնը իրեն արդիւնք ունեցած է շատ մը կարեւոր առիթներու մէջ Բարիզի Հայութեան անշարժ ու անդոյ դիրք մը պահելը, Ո՞վ պիտի չխոստովանի Բարիզի Հայերէն թէ այս վերջին հինգ վեց տարուան մէջ, որուած ըլլալով այն արտակարգ կացութիւնը որուն մէջ գտնուեցաւ հայ ժողովուրդը, Բարիզի Հայերը շատ ատելի գործ կրնային տեսնել քան ինչ որ ըրին եթէ կազմակերպուած ըլլային եւ տեւական, իրական կեանք ու ընդարձակ եւ մշտական միջոցներ ունեցող մարմնով մը ներկայացուած ըլլային։ Տարի եւ օր օրով, Հ. Շարիթեան կը գանդառախէր թէ «պազար տը Շարիթեան» մէջ հայ օրվայիններուն համար վաճառքի անկիւն մը հաստատելու փափաքով առաջարկած էր որ մէկ քանի հայ տիւրիներ յանձն առնէին վաճառողի դերն ստանձնել։ ու՞ յ՞ մէկ բարիքաքնակ Հայութիւն չէր գտնուած՝ ամենաբարձր գասու ժընաստիւններուն հետ այդ գիտութեան գործը կատարել հաւանող . . . աչք ցարալի զատալութիւնը անշուշտ տեղի պիտի չունենար եթէ Բարիզի Հայութիւնը ներկայացնող կազմակերպուած մարմին մը ըլլար, որ շատ զիւրապարհաբար այդ դերին համար հարկաւոր

եղած անձերը եւ մեզ հիւրընկալող ազգին առջևս աս յալտնդողի պղտկութիւնը պիտի խընայէր մեզնէն Այսպիսի մանրամասնութիւններ տասնհակնիւրով կարելի է նաչուել, Վէ՛ճ իսկ չի վերցընէր սա իրողութիւնը թէ շատ կենսական գործեր կան որ չեն կատարուած Բարիքի եւ ամբողջ Փրանսայի մէջ, տեսական ու հաստատուն միջոցներ ունեցող եւ ամբողջ Բարիքի Հայութեան վրայ կրթնած մարմնոյ մը չզոյտութեան պատճառով, Իրենց անձնական ուժերուն միայն վստահող անձերը համեստ արդիւնքներէ անդին չէին կրնար անցնիլ, եւ հրաշքի պէս բանքը իրագործել պէտք եղած է երբեմն դժուարին ձեռնարկներ ոչկէնչով ի գլուխ հանել կըցած ըլլալու համար, Ի՞նչ անթիւ գիմուհներ կան որ չեն եղած, հրատարակութիւններ որ չեն կատարուած, քանակաութիւններ որ չեն տեղի ունեցած, — որովհետեւ ամէն բան թողուած է անհասկներու, որոնց ամբողջ ետանգը չի կրնար միշտ նիւթական միջոցներու, պակասին տեղը լցնել, եւ որովհետեւ զեզ չէ կազմուած այն կուս եւ հզօր մարմինը որ Բարիքի Հայերուն ամեն տեսակ ուժերը իր մէջ պիտի խտտուէ, համայնական գործին համար բերելով այլազան, յարատեւ ու ամուր միջոցներու խումբը, որուն կողմնակիցներ միայն կարելի է ձեռագնէլ տերրի՛ք ցամաքերկիր մը:

Ա՛յ ատեն է սակայն որ այս պակասը զգայ Բարիքի Հայութիւնը, հիմա մանաւանդ որ ջարդերէն ի վեր հայ ժողովրդին առջև բացուած կայսրութեան հեռեւանքով, իր պարտքերը բազմապատկուած են, եւ միանգամայն իր ուժերը ճօրացած են, թրքահայ ու սուսահայ բազմաթիւ ու կարեւոր իւրմբակներու յաւելումովը: Ա՛յ ատեն է որ Բարիքի մէջ ամէն կողմէ կեան հայ կորովներուն միջև հաստատուի կապը, խարխիւ հիմնական ու անքակտելի, որ զանոնք պիտի ներգաշնակէ իրարու հետ, ազով զանոնք պիտի բազմապատկէ եւ որ զանոնք արգասանող, ճկուն ու կենդանի միութեան մը պիտի վերածի:

Բարեգործական Ընկերութեան երկրորդը որ այս զօրքս տեղի ունեցաւ, շատ գեղեցիկ փորձ մըն էր քաջ ու զգուծեամբ, եւ շատ թելագրական Բարիքարնակ Հայերու խումբ մը հաւաքուեցաւ մարդասիրական ձեռնարկի մը շուրջը, եւ յատա՛ջ եկաւ երկերջի մը, որուն գեղարարականներն փայլը եւ եղբայրական պահուողութիւնը անմոտանալի յիշա-

տակ մը պիտի թողուն Բարիքի հայ զաւգութիւն մէջ: Այդ երկերջիէն դաս մը պէտք է որ զառէ Բարիքի Հայութիւնը, Պետք է ան համագործ որ այսպիսի յաջողութիւն մը զինքը կը պարտաւորէ այգօրինակ ձեռնարկները յատեւակապ կազմակերպութեան մը մէջ ամբողջնել աշուհետեւ: Անհերիք պիտի ըլլայ որ անկից յետոյ Բարեգործական Ընկերութիւնը խաւարումի չըջանալու ունենայ նորէն. Բարիքի բոլոր Հայերը պէտք է նախանձախնդիր ըլլան որ իրենց այդ էական հաստատութիւնը կանոնաւոր ու անընդհատական կեանք մը ունենայ այլեւս: Անէն տարի, այդ երկերջիէ պէտք է որ կրկնուի, — ինչ որ արդէն Փրանսացի եւ հայ հասարակութիւններուն միջև բարեկամական շփումի արգասանող առիթ մը պիտի ընծայէ միշտ: Եւ երկրորդ ծաղիկն է միայն. պէտք է որ առնկը ամբողջնէք հողին մէջ, ապառովենք անոր կեանքը, որպէսզի սասնց բուսողութիւն ու ծայրայեղ ճիշդերու անկարենայ բնականօրէն իր ձաղիկները բուսցընել շարունակաբար. պէտք է որ Բարիքի Հայերը չչատանան այս երկերջիէն իրենց օրնեցած ետական ու վաղանցուկ գոհունականութեան մէջ հանգչելով, այլ պէտք է որ ամէն ջանք ընեն հիմա՛ լըջօրէն զօրացնելու Բարեգործական Ընկերութիւնը, որպէսզի ոչ միայն այգպիտի երկերջիներու հաճոյքը իրենց ընծայէ այսուհետեւ պարբերաբար, — ինչ որ «Իւթ»ն է գործին, — այլ որպէսզի բուն իսկ իր նպատակը կարենայ իրագործել լեւապատար ու վայելուչ կերպով մը:

Մեր ժողովուրդը զերազոյն հալածանքի շըջանի մը մէջ է այցօր, իր փախտակականները, զաղթականները, աղքատները բազմաթիւ են ստակել զան երեքք, ու Բարիքը կեդրոնական տեղ մը ըլլալով՝ անոնցմէ շատերն իրենց ցաւաղին թափառումին մէջ ասկից անցնելու կը ստիպուին: Բարիքի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը պէտք է որ մեր ամենէն հզօր մարմիններէն մէկն ըլլայ, եւ վայելէ աջակցութիւնը ոչ միայն Բարիքի բոլոր Հայերուն, այլ մեր ամեն տեղի աղքատ կիցներուն, քանի որ ան նպատակ ունի օգնել ոչ թէ՛ միայն բարեգաւառակ հայ աղքատներուն այլ ամէն կողմէ հոս ինկած խեղճ Հայերու: Այդ ընկերութիւնը պէտք է որ իրբեւ հասոյթի մտակ աղբիւր իր տարեկան երկերջիէ ձեռնենայ, այլ կանոնաորապէս իրենց ամուսնական մտքերկանը վճարող բազմաթիւ անգամներ

հաշուէ և յսուկեալ, եւ ընդունի կարեւոր նուիրատուութիւններ . ինչի՞ պիտի օգնեն հայ հարուստները, — անոնք որ զուտ ազգա-սիրական ձեռնարկներուն օգնելի եւ կե-հանա անխնայատօրէն վախկոտ նկատումներով — եթէ բարեգործական ընկերութիւններուն ալ զլանան իրեց նպատարը : Պէտք է որ այդ ըն-կերութիւնը ուժ ունենայ, իրական, հիմնաւոր ուժ մը, որ այլ եւս զայն անկործանելի եւ ճշտակեանքան մարմին մը կացուցանէ : Պէտք է որ այսպէս ըլլայ, որպէս զի այլ եւս վերջ տրուի այն անորոշ ու տղեղ կացութեան ուրով խեղճերը ստիպուած են հարիւր անգամ անհատներու դուռը ափ առնել պատատ մը հացի կամ ճանապարհածախսի մը համար : Զաւ-ուորին համար ամօթ չէ, նոյն իսկ ընական ու ազնիւ իրաւունք մըն է, զիմով իր ազգին հաւաքական բարութիւնը ներկայացնող ան-անձնական մարմնոյ մը, բայց շատ դառն ու նուաստացուցիչ է ձեռք կարկառել անհատի մը : Պէտք է որ Բարիչ ինկած հայ չքաւորը ստիպ-ուած չըլլայ այս կամ այն անձին քմահաճ գը-թութեանը ապաստանի : Պէտք է որ ան զրտ-նէ ազգային զթութեան ստունը միտ բաց, միջոցներով հարուստ, եւ միշտ պատրաստ իրեն հայթայթելու այն անհրաժեշտ նպատար որ զինքը կարող պիտի կացուցանէ զփաղաղութե-նէն ընդհատուած իր կեանքը վերսկսելու : Ան-հատական ոգորմամբ թիւան զինմու սխտեմը ունի ուրիշ կարեւոր անպատեութիւն մը : ալ, այն է որ այդ պարագային մէջ գրեթէ միշտ բաղդախնդիրները, սուտ-աղքատներն են որ կ'օգտուին . արժանապատուութիւն ունեցող աղքատը չի զիջանիք ձեռքը անհատի մը եր-կունցնել : Եւ ոգորմութիւնն ստուղ անհատ մը ոչ միջոց ունի սչ ժամանակ՝ քննութիւն կա-տարելու եւ սուտ աղքատը ճշմարիտէն զանա-զանելու . բարեգործական ընկերութիւն մը կա-րող է այդ քննութիւնը կատարել, եւ պէտք չունիմ բացատրելու թէ ո՞րքան կարեւոր է որ բարխուած նպատակը իրական խեղճերուն, օգնութեան ճշմարտապէս արժանի աղքատնե-րուն հասնին՝ փոխանակ խարեբաներու գըր-պանին մէջ կորսուելու, — ինչ որ պատահե-ցաւ այնքան յաճախ Բարիչի մէջ՝ այս վեր-ջին չորս հինգ տարիներու միջոցին : Բարիչի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը Ֆրանս-սական կառավարութեանէն պաշտօնական արտօ-նութիւն ստացած է 96ին, եւ Բարիչի Թաղա-պետական Խորհուրդը արեւկան 2000 Ֆրանքի

նուէր մը յատկացուցած է իրեն, շնորհ Պ. Յ. Իսթընտէրի քանքերուն : Այդ Թուականէն ի վեր, ընկերութիւնը կազմաւորուած ըլլալով, իր յարաբերութիւնները զարգած էին Ֆրան-սական կառավարութեան հետ, եւ Թաղապետա-կան Խորհուրդը նուէրը չչարունակեց շնոր-հել . սարակոյս չունիմ որ Ընկերութեան նոր-ընտիր զիւանը պիտի վութայ հարկաւոր զը-մուսներն ընել՝ որպէս զի այդ ընկերութիւնը իր պաշտօնական զիրքը վերստանայ Բարի-չի արտօնուած ու նպատուորուած ընկերու-թիւններու շարքին մէջ :

Մաղթելի է որ Բարեգործական Ընկերու-թեան այս վերակենդանացումը մղէր Բարիչի Հայ Ուսանողաց Միութիւնը իր մեղեւութե-նէն վերականգնելու : «Բարչաւան երկրոյթ»էն ի վեր, այդ Միութիւնը որ եւ է կեանքի նշան չէ սուտ : Նոյն իսկ արարքներունցած է, որոնք անպատուաբեր են Բարիչի հայ երիտասարդու-թեան : Իմացայ որ ուսանողները ծախքի են այն մէկ քանի խեղճուկ կարասիներն իսկ զոր ունէին իրենց հաւաքարտէին համար ու միւ-նէն անգամ մնացորդներն այն մատենադարա-նին զոր նախորդ սերունդները կազմած ու ի-րենց թողած էին : Բարիչի արժեան հայ ու-սանողներուն մէջէն պիտի չգտնուին քանի մը ձեռներեցութիւն ու կրող մ ունեցող աղքա որ վերաշինեն կործանած ստունը : Անհրաժեշտ է որ մեր ուսանողները Բարիչի մէջ ունենան ի-րենց աղուտը, զիրենք երբեմն միջանոց խը-ցիկը : Կը բաւէ որ ուղեն, եւ պիտի լրացնեն այդ օրակաթը :

Մաղթելի է վերջապէս որ Բարիչի Հայու-թիւնն ալ ունենայ զինքը ներկայացնող ըն-դարձակ, կանոնաւոր ու տեսական մարմին մը : Այնքան զարեբ կան կատարուելիք, որոնք կը մնան ծրարելի ձեւի մէջ, այդպիսի մարմնոյ մը չզոյլութեան պատճառով : Մարմին մը որ իր մէջ խտացնէր Բարիչի Հայութեան ամէն կարգի ներկայացուցիչները, եւ իր ձեռքն առնէր Հայոց անցեալն ու ներկան Ներպային ճանչցը-նելու գործը, օգնէր մեր ուսանողներէն անտնոց որ ամենէն աւելի արժանի են աջակցութեան՝ հաս-րային տեսակէտով, նպատար Բարիչի մէջ հայ-կական դպրոցի մը եւ ըլլալու մը հիմնարկութեան զազափարին իրականացմանը, այդպիսի մարմին մը կենդանական ծառայութիւն մը պիտի մատուցա-նէր մեր ժողովրդին է՛ն հիմնական շահերուն : Ուրախ եմ ծանուցանելու որ այս բազմանքը սանձանուած կը Թուի մտաւարտ իրականա-

ցումի մը, Խու մը մը բարիզարնակ Հայեր, նը-
մանօրինակ ցանկութիւններէ մղուած, Զանալու վրայ են այս միջոցին՝ կաղմել
այդպիսի մարմին մը:

Այս գաղափարին նուիրուած այդ ջանքերը,
եւ Բարեգործական Ընկերութեան վերակեն-
դանացումը, երկու նշանակալից իրողութիւն-
ներ են որոնք կը կարծեմ թէ կրնան Բարի-
զի Հայութեան հանրային կեանքին մէջ նոր
թուակախի մը բացումը համարուիլ:

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆԵԱՆ



ՅԵՆԱՆ

ԵՆ ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱՊԻՒԹԻՆԵ



Իննէսթ Թընանի անուըը շատ քիչ, կամ մա-
նուանդ շատ անկատար կերպով, ճանչցուած է
մեր մէջ: Սակաւաթիւ են այն Հայերը որ կար-
գացած են իր մէջ քանի գործերը եւ անոր
մոզական ոճին եւ տեսութեանցն ու դաղափար-
ներուն հոգի եւ բաղմնքանդ գեղէցկութիւնը
ճաշակած: Մերանացի ժամանակակից այդ քըն-
նագատ իմաստասէրը, որ իր զարուհ մեծա-
դոյն արձակագիրներէն մին է, գրեթէ բոլո-
րովին անձանօթ մնացած է մեզի: Իր գործե-
րէն ոչ մէկը թարգմանուած է հայերէնի, բաց
ի փոքրիկ տեսարակէ մը, իսլամութեան վրայ,
որ ըոյս տեսած է Թիֆլիզ, Թէպէտ Արմենակ
Հայկունի փորձած է թարգմանել իր «Յիսուսի
կեանքը»: անոր հրատարակուած տարին իսկ
(1863ին), բայց կրօնական ընդդիմութեանց առ-
ջեւ ստիպուած է տեղի առլ եւ հրատարիլ իր
ձեռնարկէն:

Անկէ ի վեր կարծեմ ոչ ոք նոր փորձ մը ը-
րած է, թէ եւ այժմ շատ աւելի զերբաւ կա-
րելի է Ռընանի որ եւ է մէկ գործը թարգմա-
նել առանց կրօնական ժողովի մը շանթերուն
ենթարկուելու: Թընանի իբրեւ ամբարիշտ ու
անհաւատ ազգամ սարսփը մեղմացած է քա-
ռասուն տարիէ ի վեր, եւ ա՛լ եթէ ոչ բարե-
պաշտ, գոնէ անմեղ ու անվնաս հեղինակ մը
սկսած է համարուիլ:

Ձեռնարկելով հայերէն ի թարգմանել իր կարե-
րազոյն հաստական երկերէն մին, այն է

«Իսրայէլի ժողովրդեան պատմութիւնը», կը
կարծեմ ուրեմն թէ զերծ պիտի մնամ բանա-
դրանքի ծիծաղելի վնասգէն: Այս քննական ու
իմաստասիրական գործին մէջ, գծելով հաս-
ղեճ Հրէից քաղաքական պատմութիւնը Դա-
տաւուրեան մինչեւ Մեծն Հերովդէս, Թընան
կը բացատրէ թէ ի՛նչպէս Մարգարէներուն
մէջ կարմուած է կամաց կամաց, առանց վար-
դապետութեան եւ առանց ծէսի, միմյաջ
սրտի մաքրութեան ու արդարութեան սերոյն
վրայ հիմնուած կրօնքի մը զաղափարը ուրկէ
ծնած է մեխականութիւնը եւ որ յառաջ բե-
րած է Յիսուս Բրիտանոր մարմնացումն է Մար-
գարէներու իղձերուն եւ ձգտումներուն, Իր
վերջին հատորը, ինչպէս ըսի, կը հասնի մին-
չեւ Մեծն Հերովդէսի մահը, այսինքն մինչեւ
Յիսուսի ժամանակը, որով «Իսրայէլի ժողո-
վըրդեան պատմութիւնը» քնական ներածու-
թիւնը կ'ըլլայ իր «Բրիտանոնէութեան ծագման
պատմութեան» որուն առաջին հատորն է «Յի-
սուսի կեանքը»:

Երկրորդ յօդուածի մը պահելով աւելի ման-
րաման տեղեկութիւններ՝ թէ՛ թարգմանե-
լիք գործին եւ թէ՛ թարգմանութեան ձեւին
ու նրթական պայմաններուն վրայ խօսիլ,
այժմ կ'ուզեմ «Անահիտ» ընթերցողներուն
ծանօթացնել Թընանի անձն ու կեանքը զոր
շատ քիչեր որոշապէս կը ճանչնան մեր մէջ:
Այդ ծանօթացումին համար լաւագոյն միջոցը
կը նկատեմ թարգմանել այստեղ Թընանի մա-
սին ընդարձակ յօդուած մը՝ զոր Ֆրանսա-
կան մեծ Հանրագիտարանին մէջ հրատա-
րակած է Պէռթըլլօ Ֆրանսացի հոշակաւոր
գիտունը որ Թընանի ամենէն մտերիմ բարե-
կամը եղած է. անոր կեանքին ու մտքին վը-
րայ հզօրագոյն ազդեցութիւնն ունեցած է:

Թարգմանութիւնը պիտի հրատարակուի պը-
րակ առ պրակ. ամէն մէկ պրակ պիտի բաղ-
կանայ 64 էջէ եւ պիտի արժէ մէկ Ֆրանք,
փոսթայի ծախքը միասին: Անահիտի ըն-
թերցողներէն անոնք որ կը փափաքին սպա-
նալ վայն, կը խնդրեմ որ հաճին ինձի իմացնել
նախապէս (*):

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵՆՆ

(*) Հասցէ՝
Y. ODIAN,

17, Boulevard St. Marcel PARIS